



საქართველოს მემკვიდრეობის სააგენტო

Առողջության ապահովագրման պետական ծրագիր

Բուժ-միջոցների ծախսերը

- Բուժ-միջոցների ցուցակի համաձայն, ապահովագրողի կողմից փոխհատուցվում է պոլիսի տարեկան ապահովագրական լիմիտը՝ 50 լարի շրջանակներում, 50 տոկոս համավճարմամբ:

Հ Ի Շ Ե ‘ Բ

Ապահովագրական ընկերությունը պարտավոր է՝

- Լրիվությամբ պաշտպանել ապահովագրական պայմանագրով նախատեսված պայմանները և ապահովագրվածին մատուցել ապահովագրական պոլիսում նշված բուժ-սպասարկումը:
- Ամբուլատոր սպասարկումը ապահովել ըստ բնակավայրի:
- Ապահովագրվածի կողմից անհետաձգելի բուժ-սպասարկում ստանալու անհրաժեշտության դեպքում՝ չստեղծել որևէ խոչընդոտ և սահմանափակում՝ բուժ- հիմնարկությունն ընտրելիս: Եթե ապահովագրական ժամանակաշրջանի ժամկետը լրանալուց հետո այլևս չեն օգտվում պետական ծրագրերից, ապահովագրական ընկերությունը շարունակում է ապահովագրության ընթացքում տեղի ունեցած անհետաձգելի հոսպիտալացման ֆինանսավորման պարտականությունը՝ 10 000 լարի լիմիտից ոչ ավելի:
- Ընկերության կողմից ընտրված բուժ-հիմնարկությունում պլանային վիրաբուժական վիրահատության սպասողական վիճակի ժամանակաշրջանը չպետք է գերազանցի 6 ամիսը: Ապահովագրական ընկերությունը պարտավոր է փոխհատուցել սպասարկման ծախսերը նույնիսկ այն պարագայում, երբ սպասողության ժամանակաշրջանում որևէ պատճառով ընդհատվել է ապահովագրական պայմանագիրը:

«Առողջության ապահովագրման պետական ծրագրի» բեռնֆիցիալները մինչև ապահովագրական ժամանակաշրջանի սկսվելը, իրենց բնակատեղիում կստանան առողջության ապահովագրման պոլիսներ՝ Վրաստանի փոստի կամ սոցիալական գործակալի միջոցով: Դրա հետ մեկտեղ, յուրաքանչյուր ապահովագրված անձ կարող է դիմել ապահովագրական ընկերություն և ապահովագրողից ստանալ առողջության ապահովագրման պոլիս:

Նշված փոփոխությունը «Առողջության ապահովագրման պետական ծրագրի» բեռնֆիցիալին հնարավորություն է ընձեռում ապահովագրական ժամանակաշրջանի սկսման հենց առաջին օրվանից ունենալ առողջության ապահովագրման պոլիս և, համապատասխանաբար, առանց որևէ խոչընդոտի ստանալ լիարժեք և որակյալ անվճար բուժ-սպասարկում՝ տվյալ պետական ծրագրի շրջանակներում:

Առողջության ապահովագրման հետ կապված խնդիրների և վեճերի առկայության դեպքում, եթե չի հաջողվում դրանք լուծել ապահովագրական ընկերության հետ, կարող եք դիմել հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ առողջության **ապահովագրման մեդիացիայի ծառայություն:** Հասցեն՝ Թբիլիսի, Ծերեթելու պողոտա №144 Թեժ գիծ՝ 2 555 115 Կայք էջ՝ www.ssa.gov.ge Էլ.փոստ՝ info@ssa.gov.ge

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն

Սոցիալական ծառայության գործակալություն

Հասցեն՝ Թբիլիսի, Ծերեթելու պողոտա №144 Թեժ գիծ՝ 2 51 00 30 www.ssa.gov.ge info@ssa.gov.ge

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն



Սոցիալական ծառայության գործակալություն

Առողջության ապահովագրման պետական ծրագիր

Առողջության ապահովագրման պետական ծրագիր



ԱՐՄԻՆԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ծրագրի բենեֆիցիալներն են

- Ընտանիքներ, որոնք գրանցված են «սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում», նրանց շնորհված վարկանիշային միավորը չի գերազանցում 70 000-ը և նրանց ապահովագրական պայմանագիրը ձևակերպված է կամ երկարաձգված մինչև 2010 թվականի ապրիլի 1-ը:
- Ընտանիքներ, որոնք գրանցված են «սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում», նրանց շնորհված վարկանիշային միավորը չի գերազանցում 70 000-ը և նրանց ապահովագրական պայմանագիրը կծնակերպվի կամ կերկարաձգվի 2010 թվականի ապրիլի 1-ից հետո:
- Ընտանիքներ, որոնք 2008 թվականի օգոստոսի 6-ից Վրաստանի դեմ Ռուսաստանի Դաշնության դեմ հարձակման արդյունքում, հարկադրված են եղել թողնել մշտական բնակավայրերը և տեղափոխվել Վրաստանի տարածքի տարբեր շրջաններ և ովքեր տարաբնակվել են պետության կամ այլ իրավաբանական անձանց կողմից գնված, վերականգնված կամ նոր ձեռք բերված ապրելավայրերում:
- Մանկա-դաստիարակչական հիմնարկություններում, փոքրատիպ ընտանեկան տներում և դպրոց-կենսօթևաններում բնակվող (այդ թվում հոգատարությունից զուրկ և սահմանափակ կարողությունների տեր) երեխաներ:
- ՀիՒԱ (Հանրային Իրավունքի Իրավաբանական Անձ)՝ պետական հոգածության գործակալության բենեֆիցիալներ:
- ՀիՒԱ՝ պետական հոգածության գործակալության մասնաճյուղերում զբաղված ավագ դաստիարակներ և դաստիարակներ:

- Վերաինտեգրման կամ վստահությամբ դաստիարակության մեջ գտնվող երեխաներ, որոնց համար էլ ընտանիքները ստանում են վերաինտեգրման աջակցություն կամ որդեգրման (վստահությամբ դաստիարակության) փոխհատուցում:
- Ժողովրդական արտիստներ, ժողովրդական նկարիչներ և Ռուսթավելու մրցանակի դափնեկիրներ:
- Վրաստանի հանրային դպրոցի մանկավարժներ:
- Հանրային դպրոցի վարչա-տեխնիկական անձնակազմ:
- Վրաստանի մասնագիտական ուսուցման կենտրոնների մանկավարժներ:
- Վրաստանի կրթության և գիտության նախարարության համակարգի մեջ մտնող այն հանրային դպրոցի դաստիարակը, որտեղ իրականացվում են վճարովի սպասարկում, հատուկ կամ շտկիչ հանրակրթական ծրագրեր կամ այն աշակերտների ուսուցում, որոնց բնութագրական է հասարակության համար անընդունելի, սահմանված կարգից շեղված վարմունք:
- Աբխազիայի Ինքնավար Հանրապետության բռնագրավված տարածքի մերձակայքում բնակվող ընտանիքներ, Վրաստանի ներքին գործերի նախարարության կողմից փոխանցված ցուցակի համաձայն:
- Համայնքային կազմակերպությունների բենեֆիցիալներ:

Բնակչության առողջության ապահովագրման պետական ծրագիրը մարում է հետևյալ կարգի բուժ-սպասարկումները

- Ամբուլատոր սպասարկման ծախսերի փոխհատուցում:
- Ամբուլատոր սպասարկում (ընտանիքի բժշկի կամ տեղամասի բժշկի կողմից մատուցված սպասարկում): Մասնագետների կողմից մատուցված ամբուլատոր սպասարկում, անհետաձգելի ամբուլատոր սպասարկում: Անհրաժեշտության դեպքում՝ ընտանիքի բժշկի, տեղամասի բժշկի, բուժքրոջ սպասարկում՝ բնակարան այցով:

- Բժշկի նշանակմամբ, էլեկտրոկարդիոգրաֆային (սրտի աշխատանքը գրանցող հատուկ սարք), էխոսկոպիկ և ռենտգենաբանական քննումներ, պլանային վիրաբուժական հոսպիտալացման հետ կապված լաբորատոր և գործիքային քննումներ:
- Բժշկի նշանակմամբ, ամբուլատոր մակարդակով կլինիկական-լաբորատոր քննումներ: Արյան ընդհանուր հետազոտում, մեզի ընդհանուր հետազոտում և կրեատին(օրգանական նյութ), գլյուկոզա ծայրամասային արյան մեջ, հղիության թեստ, հեմոգլոբին, կղկղանքի հետազոտում՝ գաղտնի արյունահոսության դեպքում:
- Սահմանափակ կարողությունների տեր անձանց (ՍԿՏԱ) սոցիալական փորձաքննության համար, մասնավորապես, ՍԿՏԱ-ի կարգավիճակ շնորհելու համար անհրաժեշտ քննումներ, բացառությամբ բարձրտեխնոլոգիական քննումների (համակարգչային տոմոգրաֆիա (շերտագրություն՝ ռենտգենյան հետազոտման մեթոդ) և միջուկա-մագնիսա-արձագանքային քննումներ):
- Ամբուլատոր մակարդակով ամեն տեսակ բժշկական տեղեկանքների և դեղատոմսերի տացք (բացառությամբ աշխատանք սկսելու կապակցությամբ IV-100/ա ձևի, ՀիՒԱ-ՆԳՆ ծառայության գործակալությունում ավտոմոբիլ վարելու վկայականի և զենք պահելու/կրելու իրավունք ստանալու համար ներկայացվելիք տեղեկանքների):

Ստացիոնար (մշտական) սպասարկման ծախսերի փոխհատուցում

- Անհետաձգելի ստացիոնար սպասարկում, այդ թվում, բարդացած հղիության, ծննդաբերության և անկողնային ռեժիմի շրջանի հետ կապված հոսպիտալացում:
- Պլանային վիրաբուժական վիրահատություններ (այդ թվում՝ ցերեկային ստացիոնար)՝ պահովագրական տարեկան լիմիտը՝ 15 000 լարի:
- Քիմիոթերապիայի և ճառագայթային թերապիայի ծախսեր՝ ապահովագրական տարեկան լիմիտը՝ 12 000 լարի:
- Ծննդաբերության հետ կապված ծախսեր՝ 400 լարի: